ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Սամվել Ավետիքյանի՝ Ֆինլանդիայի Հանրապետություն կատարած այցի արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Սամվել Ավետիքյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Հելսինկի, Ֆինլանդիայի Հանրապետություն, 2017թ. հոկտեմբերի 18-20-ը,

4. Հրավիրող կողմը՝

Ֆինլանդիայի Հանրապետության մաքսային ծառայության գլխավոր տնօրեն:

5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

Աշխատանքային հանդիպում Հայաստանի Հանրապետության և Ֆինլանդիայի Հանրապետության մաքսային ծառայությունների պաշտոնատար անձանց միջև:

6. Քննարկված թեմաները՝

Հանդիպման ընթացքում քննարկվել են մաքսային ոլորտին առնչվող հարցեր՝ ԵՄ կողմից ֆինանսավորվող Թվինինգ ծրագրի արդյունքները: Ֆինլանդիայի Հանրապետության մաքսային ծառայության և ՀՀ մաքսային ծառայության համագործակցությունը սկսվել է դեռևս 2012 թվականից, երբ Ֆինլանդիան և Լիտվան համատեղ Հայաստանում իրականացրեցին Թվինինգ ծրագիրը: 2017թ. հունիսին Երևանում կայացել է վերստուգիչ այց, հանդիպմանը քննարկվել են նաև այդ այցի արդյունքները: Ֆինլանդիայի մաքսային ծառայությունը պատասխանատու է Թվինինգ ծրագրի երկու բաղադրիչների համար՝ հետբացթողումային հսկողության և մաքսային ծառայություն-գործարար միջավայր համագործակցության համար: Քննարկվել են հետագա համագործակցության արդյունքները, համատեղ ուսումնական ծրագրերի իրականացումը, իրավախախտումների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ և այլն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի շրջանակներում ուսումնասիրվել է Ֆինլանդիայի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև սահմանային անցման կետում ստանդարտ գործառնական ընթացակարգերը և աշխատանքների կազմակերպման տեխնոլոգիական սխեման՝ ՀՀ սահմանային անցման կետերում լավագույն միջազգային փորձը ներդնելու նպատակով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Ֆինլանդիայի Հանրապետության մաքսային ծառայության հետ հետագա համագործակցությունը շարունակական դարձնել: Ֆինլանդիան մեծ փորձ ունի սահմանային հսկողության իրականացման ոլորտում, ուշագրավ է սահմանային հսկողության ծառայության և մաքսային ծառայության համատեղ աշխատանքը, գործում է իրար փոխարինելու մեխանիզմ, որը հեշտացնում է գործընթացը, մյուս բոլոր սահմանային հսկողության գերատեսչությունների լիազորությունները պատվիրակված են այդ երկու գերատեսչությունների վրա: Ֆինլանդիայում գործում է բոլոր սահմանային հսկողության գերատեսչությունների միջև համագործակցությունը բարձր մակարդակի պահելու փորձ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպման որոշումները և առաջարկությունները կարտացոլվեն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատանքային ծրագրերում:

10. Գործուղվողը՝

Սամվել Ավետիքյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

24.10.2017թ.